

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Երբ եկեղեցւոյ խաղաղութիւնը ապահովուեց, հոգեւորականութիւնը նշանաւոր դիրք ձեռք բերեց և կայսրութեան պաշտօնեաների հետ համարուում էր հաւասարապատիւ. այդ պատճառով շատ բնական է որ պալատական աստիճանաւորների պատուանիշերի հետ անցնէր նուրան, ի միջի այլոց, և ուրարը: Այս ենթադրութիւնը աւելի հաւանական է դառնում այն պատճառով, որ Կոստանդին Մեծի ժամանակուայ մի յուշարձանի վերայ, ինչպէս որ նկատուում է, մի քանի սպասաւորներ իւրեանց զգեստների վերայից կրում են լայն, շարժի նման, ժապաւէններ, որոնք հին պատկերներում նկարած պատարագի ուրարին բոլորովին համանման են: Որ ուրարը հոգեւորականները կրում էին իբրեւ պատուոյ նշան, կարելի է տեսնել Փուլգինցիոս եպիսկոպոսի (+ 533 թ.) կենսագրութիւնից, որի մասին ասուած է, թէ նա վարդապետութիւնից եպիսկոպոս ձեռնադրուելով, ինքնակամ հրաժարուեց ուրար կրելու պատուից: Միևնոյն ժամանակ պէտք է նկատել, որ իբրեւ պատուոյ նշան եպիսկոպոսների, քահանաների և սարկաւազների, իսկ յետոյ նաև կիսասարկաւազների ուրարը գործ էին ածում նոքա ոչ միայն աստուածապաշտութեան ժամանակ, այլ և սովորական, տնային տնտեսութեան մէջ, իբրեւ նշան նոցա արժանաւորութեան, ուստի և կարող է հաշուել միայն ձեական զգեստ հոգեւորականների և ոչ թէ առանձնապէս աստուածապաշտական զգեստ: Արդէն ուրարի գործածութեան նկատմամբ վերև բերուած եկեղեցական կարգադրութիւններից կարելի է հեշտութեամբ նկատել, որ այնտեղ խօսքը ուրարի ընդհանուր գործածութեան համար է և ոչ թէ մասնաւորապէս աստուածապաշտական: Գրիգոր Մեծի մասին յայտնի է, որ նա Կ. Պօլսում ապրող իւր բարեկամներին չորս ուրար է նուիրել: Բայց սոքա

ի հարկէ աստուածապաշտական ուրարներից չէին, այլ նորանցից ինչ որ պապը իւր մասնաւոր կեանքի մէջ գործէր ածուծ։ Մայնցի ժողովը (813 թ.) ուղղակի պատուիրում է, որ քահանաները միշտ, անդադար, անընդհատ, իբրեւ նշան արժանաւորութեան, ուրար կրեն։

Աստուածապաշտութեան ժամանակ բացի ուրարից պաշտօնեաների գործ ածած միւս զգեստները իրենց ձեւով նոյնպէս տարբեր չէին այն ժամանակուայ սովորական անտեսութեան մէջ գործ ածածներից։ Կարթագէնի Դ.՝ րդ ժողովը (398 թ.) իւր 41-րդ կանոնով պատուիրում է «ut diaconus tempore ablationis tantum vel lectionis alba utatur»¹⁾։ Նարբոնի ժողովը (589 թ.) որոշեց «nec diaconus aut subdiaconus certe vel lector, antequam missa consummentur, alba se praesumat exuere»²⁾։ Տօլէդի ժողովը (633 թ.) իւր 28-րդ կանոնով նոյնպէս յիշում է սարկաւազի alba-ի մասին։ Արդեօք այս վկայութիւնները չեն ապացուցանում, որ alba-ն իբրեւ որոշ ձևի զգեստ, բացառապէս աստուածապաշտական պաշտօնական զգեստ էր և նա այլ ևս աշխարհական անտեսութեան մէջ տեղ չունէր։ Կարթագէնի ժողովը—եթէ միայն նորա կանոնի մեր ընթերցումն ուղիղ է,—որ հրամայում է ալլա գործածել միմիայն վերաբերման կամ ընթերցման ժամանակ, ըստ երևոյթին, ստիպում է մեզ հարցին դրական պատասխան տալ։ Սակայն այս նիստ չի լինիլ։ Alba—խօսքը tunica alba—(սպիտակ պատմուճան) արտայայտելու համար մի արհեստական բառ է։ Այդ մտքով նա գործ է ածուած նաև աշխարհիկ գրիչների մօտ։ Մեր բերած վկայութիւնների մէջ ևս ալլա խօսքի տակ հասկացուում է

1) Mansi Collectio sacrarum consiliorum t. III. col. 957.—Որպէս զի սարկաւազը միմիայն վերաբերման կամ ընթերցման ժամանակ գործ ածի «ալլա»։

2) Binterim. Cit. op. B. IV. TH. I. s. 194.—Սարկաւազը, կամ կիսասարկաւազը և առաւել ևս, ի հարկէ, ընթերցողը, նախ քան պատարագի վերջանալը, թող չմտածէ ազատել իրեն «ալլայից»։

ձևով ոչ այլ զգեստ, քան այն ժամանակ ամենքի գործածած պատմութեանը, որի գոյնը՝ ինչպէս վերին ասացինք, սպիտակ էր։ Բրակարէնի ժողովը, որի կանոնը մենք մի անգամ յիշել ենք, այն զգեստը, որ սարկաւաղները հագնում էին, որն այստեղ արքա է անուանուում, կոչում է ուղղակի պատմութեան (tunica)։ Իսկ կարթագէնի և Նարբոնի ժողովների կարգադրութիւնները պէտք է հասկանալ այսպէս, որ նոքա որոշում են ժամանակը սարկաւաղների կրած այն արայի, որը մի անգամ գործ էր դրուած աստուածաշտութեան համար և որը, հետեւապէս, իւր նըշանակութեամբը սրբազան դարձաւ, — բայց որ նոքա երբեք չեն խօսում այն մասին, թէ այդ զգեստը, իբրեւ յայտնի որոշ տարազ աշխարհական տնտեսութեան մէջ գործածուիլ չէր կարող։ Նոյն իսկ Ժ.-րդ դարում տնային տնտեսութեան մէջ գործ էր անուում այն, օրինակ, Լեոն 2. պապը (855 թ.) կարգադրեց. «nullus in alba, qua in suo usu utitur, praesumat missas cantare» (Ոչ ոք արքա հագած, որը գործ է դրել իւր անձնականի համար, չհամարձակուի քարոզ տան պատարագի ժամանակ)։ Բիկուլֆ եպիսկոպոսը (889 թ.) կարգադրում է. «ut nemo illa alba utatur in sacris mysteriis, qua in quotidiano velexteriori usu induitur. (Ոչ ոք չհամարձակուի ս. խորհրդի ժամանակ գործ դնել այնպիսի արքա, որը նա գործ է անել ամեն օր կամ արտաքոյ եկեղեցւոյ)։ Բատերիյ եպիսկոպոսը նոյնպէս որոշում է այն, ինչ որ վերին ասացինք. «nullus in alba, qua in usu suo utitur, praesumat missas cantare».

Յայնքերի մօտ իբրեւ աստուածաշտտական զգեստ յիշուում է *արթալ* (շապիկ), Այս զգեստը համապատասխանում էր արեւմտեան պատմութեանին և ինչպէս վերջինս, գործ էր անուում մասնաւոր կեանքի մէջ։ Այնպէս որ, եթէ Աթանասը մեղադրուեց Աղէքսանդրիացւոյ վշեայ շապիկներ տալու պատուէրի համար, այն ժամանակ, ի հարկէ, այստեղ պէտք է հասկանալ ոչ միայն առանձնապէս ժամաշապիկները, այլ և մասնաւոր կեանքի մէջ գործ

ածածը: նմանապէս եթէ Աթանասը իւր փախուստից առաջ արագութեամբ ի միջի այլոց վերցնում է շապիկ—*στραζιον*, ուստի և այս վերջինը, ի հարկէ, եկեղեցական զգեստ չէր: Եւ Գրիգոր Նազիազանցին կտակում է *στραζιον εν* ինչպէս Եւագրիոս սարկաւազին, նմանապէս և աշխարհական քարտուղար Էլլագիոսին:

Վերջապէս կը խօսենք նաև մի շատ էական աստուածապաշտական զգեստի մասին,—այսինքն այն զգեստի՝ որ արեւելքում *φελονιον* (ճանապարհորդական վերարկու, թիկնոց) էր կոչուում, իսկ արեւմուտքում՝ առաջ յայտնի էր պէնուլա—*paenula* (մինչև V. դարի վերջը) յետոյ—պլանէտա—(*planeta*—մինչև 800 թ.) և վերջապէս կազուլա (*casula*—800 թ. սկսած) տնուամբ: Այս զգեստը զանգահաձև ամբողջ մարմինն ընդգրկող առանց թևերի ու կրտուածքի, գլխի համար միայն մի անցք ունեցող թիկնոց էր, որի երկու կողմի թևերը բարձրանում էին ուսերի վերայ: Ինչպէս միւս զգեստները, նմանապէս և այս զգեստը վերցրած են աշխարհիկ տնտեսութիւնից աստուածապաշտութեան համար, որը միևնոյն ժամանակ դործ էր ածուում մասնաւոր, ընտանեկան կեանքում: Ընտանեկան կենցաղավարութեան մէջ պէնուլա (ֆիլոն) սկզբում հաշուում էր ստորին դասակարգի զգեստ, իսկ բարձրաստիճան անձինք դործ էին ածում նորան ցրտից և անձրևից պաշտպանուելու համար իբրև ճանապարհորդական զգեստ, *vestimentum itinerarium aut pluvial* (եափնջի, տառատոկ): Սակայն այս հայեացքը շատ շուտ փոփոխութեան ենթարկուեց, պէնուլան նոյն իսկ բարձրաստիճան մարդկանց պատուաւոր զգեստը դարձաւ Օրինակ, Մակրին կայսրը (218 թ.) բաժանում էր *paenula coloris rosei* (*russei*?) կարմիր գոյնի տառատոկ: Թէոփոսի օրէնսգրքի մէջ ծերակոյտի անդամներին (սենատոր) կայսերական պատուէրով արգելուում է զինուորական բղամիգ կրելու և կարգադրում է սորա տեղ, իբրև խաղաղ զգեստ ի միջի այլոց պէնուլա կրեն: Այսպիսով, ուրեմն, պէնուլան դարձաւ պետական աստիճանաւորների համազգեստ:

Այսպէս հեշտութեամբ պարզուում է, թէ ինչ ձևով նա կղերիկոսների զգեստ դարձաւ և սկսեց գործ դրուել ժամապաշտութեան ժամանակ: Յօդուտ այն կարծիքի, որ ֆելօնը կամ պէնուլա, իսկ վերջերս պլանիտտ և կազուլա, — քացառապէս պատարագի զգեստ չէր, այլ և սովորական, ոչ հոգեորական, այլ և աշխարհական՝ և այն էլ առաւել աղնուական անձանց համար, կարելի է շատ օրինակներ բերել: Այսպէս օրինակ, Թէսագոնիկէի Դ. դարու Ս. Գրիգոր եկեղեցւոյ մոզաիկները պատկերացնում են մի եպիսկոպոսի և մի քահանայի փիլոնով, բայց միեւնոյն զգեստներով նոյն մոզաիկները պատկերացնում են Կոսմա և Դամիան աշխարհականներին: Կոսսիանը (+ 418 թ.) եգիպտական կրօնաւորների համար ի միջի այլոց ասում է. «ita planeti carum (vestium) simul atque birrorum pretia et ambitionem devitant», այսինքն կուսակրօնները խոյս էին տալիս planetam et birrum այն պատճառով, որ այդ ըզգեստները իբրև աղնուական յատկանիշ (pretia) կարող էին փառասիրութիւն զարթեցնել: Յուստինիանոսի (547 թ.) Բովէննայում կառուցած Ս. Վիտայիայի բազիլիկիայում Մակսիմիան եպիսկոպոսը պատկերացրած է վերնազգեստով (փիլոնով). (planeta): Բայց, համարեա, մօտաւորապէս միևնոյն ժամանակները (533 թ.) Ֆուլգինցիոս եպիսկոպոսի համար ասուած է, թէ երբ վերջինը արքայից վերադառնում էր, նորան դիմաւորեցին գլխաւորապէս աղնուականները պլանէտա զգեստով: Վերոյիշեալ զգեստի նկատմամբ հետաքրքիր տեղեկութիւն գտնում ենք Զ. դարի համար Գրիգոր Մեծ պապի կենսագիր Յովհաննէս սարկաւագի մօտ: Պապի զգեստները նա նկարագրում է հետեւեալ կերպով. «planeta super dalmaticam castana.» (պլանիտան դալմատիկայի վերայից պիտի լինի շագանակագոյն): Բայց համարեա թէ միևնոյնն է ասում իւր հօր՝ Գորտիան սենատորի զգեստի համար. Gordiani; habitus castanei coloris planeta est; sub planeta dalmatica. (Գորտիանոսի զգեստը շագանակագոյն գունաւոր պլանետայ է,

իսկ պլանետայի տակ դալմատիկա*)։

Մէկ ուրիշ տեղ պատմելով թէ ինչպէս Գրիգոր պապը կուրացրեց (անէծքով) կախարչներին, ի միջի այլոց նկատում է, որ պապը այդ ժամանակ չըջապատուած էր ամբօխով planetarum, թէև այստեղ մութ է մնում, արդեօք մի միայն կղերիկոսներն էին այդպէս հագնուած, թէ և ազնուական աշխարհականները և հոգեւորականները. այնուամենայնիւ անկասկած է, որ planeta նկատուում է ոչ թէ իրրեւ աստուածապաշտական զգեստ, այլ իբրեւ սովորական կեանքում գործածուող զգեստ, որովհետև նկարագրած դէպքը պատահեց փողոցում, իսկ Գրիգոր պապը գնում էր ձիով։ Այս բոլորից երևում է, որ պլանետան ոչ թէ միայն աստուածապաշտական՝ այլ և սովորական, աշխարհիկ գործածուող զգեստ էր։ Նոյն գործադրութիւնն է ունեցել այն և է. և Ը-րդ դարերում։ Տօլէդի Գ-րդ ժողովը (633 թ.) իւր 28-րդ կանոնի մէջ ասում է, որ զրկուած քահանայն անիրաւացի կերպով է իւր կրկին վերագարծին պլանետա ստանում։ Պլանետան այստեղ նկատուում է ըստ երեւոյթին ոչ թէ իբրեւ աստուածապաշտական՝ այլ իբրեւ քահանայական զգեստ, որ կարելի էր նաև ժամապաշտութիւնից դուրս գործածել։ Նմանապէս և Գերմանիայի ժողովը (742 թ.) ս. Բոնոֆիցիոսի ժամանակ, իւր 7-րդ կանոնով պատուիրում է «ut presbyteri et diaconi non sagis, laicorum more, sed casulis utantur, ritu servorum Dei»։ (Քահանաներն ու սարկուազները չպէտք է գործածեն sagis, որը գործ են անում աշխարհականները, այլ casulis, ինչ որ Աստուծոյ ծառաներին վայել է)։ Այստեղ խօսուում է կաղուլայի (պենուլա, պլանիտա, ֆելօն) գործադրութեան համար ընդհանրապէս և ոչ թէ բացառապէս աստուածապաշտական զգեստի համար։

Այն բոլորից, որ մենք ասացինք առանձին աստուած-

*) Սոյն զգեստն էր ծիրանին, որ գործ էին անում այն ժամանակ սենատորները, եպիսկոպոսները և աշխարհիկ գործավարները։
Ման. Թարգ.

պաշտական զգեստների մասին, պարզապէս ստանում ենք հետեւեալ եզրակացութիւնը: Աստուածապաշտութեան ժամանակ հոգեւորականութիւնը գտնեա մինչև թ. դարը*), տարազով միևնոյն զգեստն էր կրում, որ նա գործ էր անում՝ մասնաւոր կեանքի մէջ և որը իբրև ազնուականների զգեստ, նորա պատուաւոր յատկանիշն էր: Այս ենթադրութեանը բոլորովին չէ հակասում այն հանգամանքը, որ արդէն Ե-րդ դարից սկսւում է յիշուել *habitus religionis*: Վերջինս որքան Աստուածապաշտական, նոյնչափ էլ մասնաւոր կեանքի զգեստ է: Դորա համար փաստ կարող են ծառայել Զ. դարի երկու ժողովների հետեւեալ որոշումն. Ագաթէնդէի ժողովը (506 թ.) իւր 20-րդ կանոնով հրամայում է. «*Vestimenta vel calceamenta eis (clericis) nisi quae religionem deceant, ut; aut habere non liceat*». (Նոցա (հոգեւորականներին) զգեստները և ոտնամանները թոյլատրելի են միայն այն, ինչ որ կրօնին վայել է): Իսկ Մատիսկոնիայի Ա. ժողովը (581 թ.) իւր 5-րդ կանոնով որոշում է. «*ut nullus clericus aut vestimenta vel calceamenta saecularia, nisi quae religionem deceant, induere praesumat*. (հոգեւորականներին թոյլատրւում են այն ըզգեստներն ու կոշիկները, որոնք վայել են կրօնաւորին): Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում յիշուում է *habitus religionis*, — քայց այստեղ ի նկատի է առնուած ոչ թէ իբրև աստուածապաշտական զգեստ, այլ իբրև զգեստ, որ պէտք է իրենց մասնաւոր ընտանեկան կեանքի մէջ կրելին:

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ քահանայական զգեստները իրենց ձեւով երբ սկսեցին տարբերուել աշխարհական, ժողովրդական զգեստներից, պէտք է նկատել,

*) Թէ ե՞րբ է Աստուածապաշտական զգեստը հոգեւորականների սովորական կեանքում կրածից տարբերուել սկսել, փաստեր չունենալով, չենք կարող ճիշտ որոշել: Արդեօք այստեղ նշանակութիւն չունի այն հարցը, թէ ե՞րբ են ծագել վերաբերումն և կապան:

որ կանոնաւոր տարբերութիւն նոցա մէջ սկսուել է Զ-րդ դարից: Երբ ազգաց շարժումն սկսուեց, միմեանց դէմ յանդիման կանգնեցին երկու քաղաքակրթութիւն — հռովմէական և գերմանական: Թէ մէկը և թէ միւսը հակառակ էին միմեանց թէ ինչպէս լեզուով և սովորութեամբ, նոյնպէս և զգեստով: Ինչ վերաբերում է զգեստներին, — նոցա բաժանում էին երկու իրարից շատ տարբեր տեսակների՝ — գերմանացիներինը կարճ, նեղ և սովորական էր, իսկ հռովմայեցիներինը՝ երկար, այն ևս աշխարհիկ: Գերմանական ազգերի հռովմէական կայսրութեան մէջ խուժելու հետ միասին այստեղ սկսուեց աւելի և աւելի զօրեղանալ նոյնպէս և նոցա քաղաքակրթութիւնը, իսկ դուրս հետ կամաց կամաց հռովմէացւոց մէջ գործածութեան մէջ մտաւ և գերմանացւոց կարճ զգեստը: Հռովմէական հագուստը սկսեցին գործ դնել միայն պետական աստիճանաւորները և նշանաւոր դասակարգերը: Թէև այստեղ էլ նորա գործադրութիւնը հազիւ թէ Է-րդ դարից միւս կողմը անցնի: *) Սակայն եկեղեցին օտար ազգեցութեանց խուժման դէմ աւելի ընդդիմութիւն էր ցոյց տալիս: Եկեղեցին շարունակեց գործ դնել իւր պարտաւորեցուցիչ հռովմէական զգեստը և արգելում էր կղերիկոսներին գործածել բարբարոսների զգեստները ոչ միայն աստուածապաշտութեան ժամանակ, այլ և մասնաւոր ընտանեկան կեանքի մէջ: Ուրեմն, այստեղից կարելի է եզրակացնել, որ եկեղեցւոյ պաշտօնեաների զգեստները, իսկ սօրանից էլ աստուածապաշտականը, բաժանուել է աշխարհական, ընդհանուր զգեստներից, Է-րդ դարում **):

*) Թէև դուրս համար մենք փաստեր չունինք: Սակայն ինչպէս Գորգեան ատենակալի զգեստները նկարագրութիւնից երեւում է, հռովմէական բարձրաստիճան անձինք կրում էին դեռ հռովմէական հին զգեստը:

**) Օրինակ, սօրան են վերաբերում հետեւեալ ժողովների կարգադրութիւնները՝ Ադաթէնդէ (742 թ.) Մատիսկոնիայի 1. (581 թ.) և Գերմանիայի (742 թ.) Մարտին եպիսկ. կանոնները.

Այժմ, վերադառնալով մեր քննած հարցին, որը մենք սոյն յօդուածի սկզբում դրինք, վերև ասածներից յետոյ մենք պէտք է հետևեալ բացասական պատասխանը տանք: Եկեղեցական զգեստներ, յատկապէս աստուածպաշտականի մտքով վերցրած, իրենց արտաքին ձեւով տարբեր ընդհանուր աշխարհիկ զգեստներից մինչև է-րդ դարը գոյութիւն չեն ունեցել. իսկ իրենց արտաքին ձեւով տարբեր այնպիսի զգեստներ, որ գործ էին ածում կղերիկոսները իրենց մասնաւոր կեանքի մէջ, — մինչև Թ. դարը գոյութիւն չեն ունեցել: Սակայն, այս դէպքում, կա՞ր արդեօք այդ ժամանակ եկեղեցական զգեստ, այսինքն աստուածպաշտական, տարբեր սովորականից եթէ ոչ ձեւով, գոնեա մի ուրիշ բանով: Արդեօք երբ են աստուածպաշտութեան ժամանակ գործ ածուող զգեստները մասնաւոր կեանքի մէջ գործածականներից այսպէս թէ այնպէս սկսել տարբերուել:

Նորագոյն գիտնականների մեծամասնութիւնը, որոնցից յայտնի են՝ Բինտերիմ, Բօկ, Հեֆելէ և Կրիզ, թէև ընդունում են հաստատապէս, որ առաջին դարերի աստուածպաշտական զգեստները իրենց ձեւով բոլորովին նման էին այն զգեստներին, որը կրում էին կղերիկոսները և ընդհանրապէս աշխարհականները իրենց ընտանեկան կեանքի մէջ, որ հէնց սկզբից, նոյն իսկ առաքեալների ժամանակից երկու տեսակ զգեստների մէջ տարբերութիւն կար: Այս տարբերութիւնը նորա մէջ է, թէ այդ զգեստները ինչի են յատկացուած, այն մտքով՝ որ սովորական զգեստները մի անգամ գործ դրուելով աստուածպաշտութեան նպատակի համար, այլ ևս ուրիշ դէպքում չէին կարող գործադրուել և իբրև սրբազան առարկաներ՝ թողնում էին բացառապէս եկեղեցուն: Այսպիսով, ուրեմն, երևում

2-րդ տիեզերական ժողովի կանոնները. «Ոչ որ եկեղեցականներից թող չհագնի անպատշաճ զգեստ, ոչ քաղաքում, ոչ ճանապարհին, Բայց նոցանից իւրաքանչիւրը թող հագնէ արդէն մի անգամ կղերիկոսների համար որոշուած զգեստը: (книга правилъ 1862, ст. 132).

է, որ ամենավաղ ժամանակներից գոյութիւն ունէր յատկապէս եկեղեցական զգեստ:

Բայց և այնպէս, որքան էլ ցանկանանք ապացուցանել այդ հայեացքը, չենք կարող, որովհետեւ, այդ մի հասարակ հանելուկ է, որը յօգուտ իւր ոչ մի հիմք չունի: Մեր համոզմամբ, մօտաւորապէս մինչև Բ-րդ դարի վերջը աստուածապաշտական և սովորական զգեստների մէջ չկար ոչ միայն ձևի, այլ և գործադրութեան մէջ տարբերութիւն, այսինքն, այդ ժամանակ միևնոյն զգեստը կարող էր գործ դրուել ինչպէս պատարագի ժամանակ, նոյնպէս և մասնաւոր ընտանեկան կեանքի մէջ: Քրիստոնէական աստուածապաշտութեան նախնական ժամանակի պարզութիւնը նոյն իսկ, որի մասին մենք խօսում ենք, — աստուածապաշտութիւնը, որը հաւատացեալների, ընդհանուր աղօթողների և հասարակ ժողովների բնաւորութիւն ունէր, առիթ չէր տալիս մտածելու, որ այդ ժամանակ, աստուածապաշտական և ընտանեկան զգեստների մէջ սկզբունքային տարբերութիւն լինէր և այդպիսով առաջ դար սուրբ, եկեղեցական զգեստի գաղափարը: Ինչ վերաբերում է առաքեալներին, այն հանգամանքները, որոնց մասին մենք խօսեցինք, ուղղակի ստիպում էին նոցա միևնոյն զգեստը կրել թէ աստուածապաշտութեան ժամանակ և թէ ընտանեկան կեանքի մէջ: Նմանապէս նաև նոցա յաջորդները, մօտաւորապէս մինչև Բ-րդ դարի վերջը աստուածապաշտական զգեստների գործածութեան մէջ կատարեալ ազատութիւն էին վայելում: Այստեղ նոքա պիտի հսկէին միայն վայելչութիւնը և մաքրութիւնը, — սակայն այդ, ի հարկէ, կատարելապէս տեղ գտաւ և նոցա մասնաւոր կեանքի յարաբերութեան մէջ և ոչ միայն նոցա, այլ և բոլոր քրիստոնէականների: Ժամանակի այդ շրջանում աստուածապաշտական և ընտանեկան զգեստների մէջ որևէ խիստ սահման չէր կարող լինել, և դուրս համար չէ կարելի գտնել նոյն իսկ ոչ մի վրաստ, ապացոյց: *) Թէև

*) Այս նպատակով մենք զիտմամբ նայել ենք Վարնաւի

Բինտերիմ, սորա հետ և Հեֆելէ իւրեանց կարծիքն ապացուցանելու համար յենաում են Կղէմէնտ Աղէքսանդրացու վերայ (մ. 200 թ.): Ահա թէ Հեֆելէն ինչ է գրում. «Եւր պետագոգի Գրդ գլխում (11 գլ.) նա (Կղէմէնտը) նախատում է իւր ժամանակի քրիստոնեաներին նորա համար, որ նորա եկեղեցուց դուրս գալուց յետոյ զգեսների նեւ փոխում են նաև իւրեանց սովորութիւնները, և փոխանակ չափաւորութեան և լրջութեան, որ նորա եկեղեցում են ցոյց տալիս, թոյլատրում են իրենց ամեն տեսակ թեթևամտութիւն»:

Այժմ, եթէ աշխարհականները եկեղեցի էին դնում այլ զգեստով քան սովորական կեանքի մէջ կրածը, այն ժամանակ այս աւելի քահանաներին կը վերաբերէր: Սակայն եթէ մենք իսկականի հետ համեմատենք, կը տեսնենք, որ Կղէմէնտ Աղէքսանդրացու խօսքերը բոլորովին յօգուտ Հեֆելէի չեն խօսում. վերջինս նոցա իմաստը սխալ է թարգմանել. ահա այդ կտորը. «οὐδὲ θεοὶ οὐδὲ θεοὶ συµμεταβάλλονταί τοῖς τόποις καὶ τὰ σχήματα καὶ τοὺς τῶν» *). Այստեղ σχήματα խօսքը—լատիներէն *habitus*—որ կարող է նաև արտաքին ասարզ և զգեստ արտայայտել, Հեֆելէ և Բինտերիմ ընդունում են վերջին իմաստով: Սակայն խօսքի կապը ոչ միայն դարան չէ նպաստում, այլ և ստիպում է մեր խօսքի համար առաջին ընդհանուր իմաստն ընդունել: «Եւ մարդիկ, որոնք իրենց Քրիստոսին են նուիրել, իրենց ամբողջ կեանքի մէջ ոչ թէ պէտք է երևան, այլ լինին նոյնքան համեստ և բարեվայելուչ, ինչպէս որ նորա եկեղեցումն են լինում» նոյնչափ համեստ, աստուածավախ, սիրալիր: Բայց ես չեմ կարողանում խելամտել, ինչու են նորա տեղը փո-

թուղթը, Կղէմէնտ հռովմայեցու երկու թղթերը, Հովիւ Երմա, Բռնատիրոս աստուածալրի եօթ թղթերը, Պոլիկարպ Ամփոնացու թուղթը (Памяти. Христ. писем. Т. I.).

*) «Եսկ այժմ չգիտեմ թէ ինչպէս կեանքի փոփոխութեան հետ փոխուել են զգեստները և սովորութիւնները»:

խելով իրենց արտաքին տեսքն ու վարքն էլ փոխում պո-
լիպի (բազմոտանի կենդանի) նման, որը նմանութուն է
այն քարերին որոնց կաշուով է և նոցա գոյնի համեմատ
էլ իւր կաշուին գոյն է ապրիս ժամից դուրս դալով,
մի կողմն են թողնում նոքա եկեղեցու մէջ Աստուծոյ հո-
գուց նորանց վերայ ծածանող նաև սուրբ զգացմունք-
ները և նմանութուն են այն մեծամասնութեանը, որի
մէջ նոքա անց ու դարձ են անում, Կամ լաւ է ասել,
հէնց որ մի կողմն են դնում կեղծաւոր համեստութիւնը,
յայտնութուն է, որ նոցա իսկական հոգեւոր պատկերի վե-
րայ նա միայն իբրև դիմակ էր, Ըստ երևոյթին, նոքա
խոնարհութեամբ լսելով Աստուծոյ խօսքը, նորան հէնց
այնտեղ էլ, որտեղ լսել էին, թողնում էին, ժամերգու-
թիւնից դուրս, կարծէք, խելայեղութեամբ վատաշուէր-
ների ընկերութեան մէջ յղիացած ինքնամոռացութեան
մէջ են ընկնում, Ականջ դնելով քնարերգւորին և քնար-
երգութիւններին, իրենց չափն անց էին կացնում, լսելով
նոցա սիրահարական ճշվոցը, սրնդի երգի ազդեցութեան
տակ մոլեգնութեան են հասնում, ծափահարում են, հար-
բում են, թոյլ են տալիս իրենց ապականուել և կեղ-
տոտուել ժամանակի հոսանքի և քամու բերած ամեն
տեսակ կեղտով ու աղբով*)։ Այստեղ զգեստների մա-
սին ինչպէս երևում է պարզ, ոչ մի խօսք չկայ, Իսկ եկե-
ղեցական կեանքից դուրս քրիստոնեաների պախարակելի
զանազան արարքների թուելը, որ ծառայում են βαλλονται
και τα σχήματα και τους τζόπους խօսքերի բացատրութեան,
պարզապէս ցոյց է տալիս, որ սքէմա խօսքը ոչ թէ «ըզ-
գեստի» նշանակութեամբ պէտք է վերցնել, այլ ընդհա-
նուր,—«արտաքին տարազ» նշանակութեամբ, Բացի այդ,
եթէ սքէմա (հաբիտուս) խօսքին տանք այն նշանակու-
թիւնը, ինչ որ Բինտերիմ և Հեֆելէ, այդ դէպքում էլ
Կղէմէնտի վկայութիւնը խօսում է ոչ թէ յօգուտ նոցա,

*) Մանկավարժ Կղէմէնտ Աղէքսանդրացի Գիրք Գ. դ. 2.
Թարգմ. Н. Корсунская եր. 320—321:

այլ աւելի շուտ մեր: Ընթերցումն այն ժամանակ կլինի այսպէս. «Ձեռ կարողանում խելամտել, թէ ինչո՞ւ նոքա փոխելով իրենց տեղը, փոխում են նաև զգեստներն ու վարքը»: Այստեղից հետևում է, որ Կղէմէնտը նախատում է իւր ժամանակի քրիստոնեաներին՝ եկեղեցուց դուրս դալուց յետոյ իրենց զգեստը փոխելուն համար, այսինքն, այստեղ հասկանալի է, վայելուչները—անվայելուչներով: Իսկ այստեղից ինչ կարող ենք եզրակացնել: Այն, որ ի հարկէ, քրիստոնեաները եկեղեցուց դուրս դալուց յետոյ չպէտք է փոխեն զգեստները, այլ ընդհակառակը, մասնաւոր կեանքի մէջ էլ պիտի կրեն այն զգեստը, որոնցով նոքա եկեղեցի են գնում, այսինքն—ուրիշ խօսքով, նոցա մէջ պիտի պահպանել բարեվայելութիւն և պատշաճաւորութիւն, ոչ միայն եկեղեցում, այլ և նորանից դուրս: Ըստ Հեփելէի սակայն այդ եզրակացութեան չենք հասնում. ինչպէս որ նա է հաղորդում Կղէմէնտի խօսքը—զգեստների հետ փոխում են և վարքը հետևում է, որ կշտամբանքը տարածուում է միայն վարքի և ոչ զգեստի վերայ, բայց այդ տեսակ հաղորդելը բոլորովին կամայական և բուն խօսքի աղաւաղումն է: Թէ քրիստոնէութեան նախնական ժամանակին աստուածապաշտական և աշխարհական զգեստների մէջ սկզբունքային տարբերութիւն չէ եղել, դորա արձագանքը լսուում է նաև Զ-րդ դարում: Փուլգէնցիոս եպիսկոպոսի (533) մասին յայտնի է, որ նա աստուածապաշտութեան ժամանակ գործ էր ածում այն զգեստը, որի մէջ և՛ քնում էր, և՛ խօսում էր, որ աստուածապաշտութեան ժամանակ աւելի լաւ է փոխել սիրտը քան զգեստները*):

*) Հերոնիմոսը Իլիոդորին գրած նամակում յիշում է տուներին, որը Նէպոցիան քահանան գործ էր ածում «Քրիստոսին ծառայելու ժամանակ» և որը նա պատուիրեց իրեն—Հերոնիմոսին տալ: Այս տուներին ընդհանրապէս հաշուում են իբրև Նէպոցիանի աստուածաբանական զգեստ: Սակայն Հերոնիմոսի նկարագրութիւնից երևում է, որ Նէպոցիանը նոյն զգեստը գործ էր ածում և տնային կեանքի մէջ: Մահուանից առաջ

Մինչև Բ-րդ դարի վերջը հոգևորական անձանց աստուածապաշտական և մասնաւոր կեանքի մէջ կրած զգեստների մէջ շնորհունելով տարբերութիւն, մենք ևս առաւել չենք կարող համաձայնել Բօկի այն ենթադրութեան հետ, որ եկեղեցւոյ հայրերը առաքեալների ժամանակից սկսած գործ էին ածում աստուածապաշտութեան ժամանակ թանկագին նիւթերից (թանկագին մետաքսեայ և բեհեզեայ կտորների) պատրաստած զգեստներ, տարբերելու համար իրենց առօրեայ կեանքի և միւս քրիստոնեաների զգեստներից: Ի հարկէ շատ հաւանական է, որ անուանի կամ հարուստ դասակարգին պատահաբար պատկանող մի քանի առաջաւորներ գործ էին ածում աւելի կամ պակաս շքեղ զգեստներ, — սակայն նոյն բանը չէ կարելի բոլոր առաջաւորների համար պնդել և համարել այդ այն ժամանակ բոլորից ընդունուած մի սովորութիւն: Ինչպէս բոլոր քրիստոնեաներն ընդհանրապէս, նաև եկեղեցւոյ պաշտօնեաներն մասնաւորապէս, պէտք է զգեստների նկատմամբ պահպանէին պատշաճաւորութիւն, պարզութիւն և համեստութիւն, — շքեղութիւնը նախատուում էր ընդհակառակը, իբրև քրիստոնէութեան ոգուն հակառակ բան: Կղէմէնտ Աղեքսանդրացին ուղղակի ասում է, որ Պիտագորգը քրիստոնեաներին թոյլ է տալիս կրել մի միայն «հասարակ» զգեստներ^{*)}: Այն բոլորը, ինչ որ աւելի կամ հաւանակաւորութեամբ կարելի է ասել աստուածապաշտական զգեստների նիւթի նկատմամբ, այս այն է, որ այդ նպատակի համար ծառայում էր վուշը, բայց ոչ երբէք մետաքսեայ և գոյնզգոյն կերպաներ: Վերջինների գործածութիւնը Կղէմէնտ Աղեքսանդրացին ընդհանրապէս բոլոր քրիստոնեաների համար դատապարտելի է համարում, իսկ Սեղբես-

տենդի մէջ, Նէպոցիանը մի կողմ ձգեց իւր վերայից քղամիտը, իսկ յետոյ բռնելով Իլիոտորի ձեռքը, ասաց. այս պատմուճանը (տունիկա), որ ես Քրիստոսին ծառայելու ժամանակ գործ էի ածում, ուղարկիր Այո՛, այսինքն այն՝ որ հոգիս է: (ԵԲ. Երոն. Դ. II. ԵԹ. 15).

*) Աղեքսանդր Պիտագորգ գիրք Բ. դ. 3:

տրոս պապը (314 թ.) ուղղակի կարգադրեց, որ աստուածապաշտութեան ժամանակ գործադրուեն ոչ թէ մետաքսից կամ գոյնզգոյն կերպասներից՝ այլ միմիայն վուշից պատրաստած զգեստներ:

Իսկ ինչ աստուածապաշտութեան ժամանակ եկեղեցւոյ աւագների զգեստների գոյնին է վերաբերում կարելի է որպէս ճշմարիտ ընդունել, որ ինչպէս այդ ժամանակ, նոյնպէս և յաջորդ դարերում սովորական գոյնը եղել է սպիտակը: Սակայն այս էլ չէ կարելի յատկապէս իբրև աստուածապաշտական զգեստների սեպհականութիւն նկատել: Զգեստների սպիտակ գոյնը հաշուում էր իբրև վայելուչ բոլոր քրիստոնեաների մօտ, ոչ միայն աստուածապաշտութեան ժամանակ, այլ և տնային կեանքի մէջ, — ինչպէս այդ մասին վկայում է Կղէմէնոս Աղէքսանդրացին *):

Մի խօսքով, եկեղեցական զգեստներ, աստուածապաշտական սուրբ զգեստի իմաստով վերցրած, որ և է կերպով տարբեր սովորականից, աշխարհականից, մօտաւորապէս մինչև Բ-րդ դարի վերջը, ըստ մեր կատարեալ համոզմունքի գոյութիւն չեն ունեցել: Սրբազնագործ պաշտօնեաների աստուածապաշտական զգեստները սկսեցին զանազանուել ամենօրեայ զգեստներից իրենց նշանակութեամբ, այսինքն հետևաբար որոնք նկատուում էին յատկապէս սրբազան եկեղեցական զգեստներ, և չէին կարող առօրեայ կեանքի մէջ գործադրուել, — աւելի ճիշտ կարելի է Գ-րդ դարը հաշուել: Այդ ժամանակ հոգևորականութիւնը բաժանուեց հաւատացեալների հասարակութիւնից, իբրև մի առանձին դասակարգ կեանքի մէջ:

*) Պիտագորզը Գ. գիրք. 10 գլ. ասում է այն մարդոց համար, որոնք անմեղ են և հոգով արդար, վայել է սպիտակ և հասարակ զգեստը: Գ. գիրք. 2 գլ. — Պիտագորզը թոյլ է տալիս մեղ հագնել սպիտակ գոյնի զգեստներ: Գ. գիրք. 2 գլ. — մանաւանդ մեղ՝ լոյսի և խաղաղութեան մարդկանց վայելուչ է սպիտակ գոյնը:

Քրիստոնէական աստուածապաշտութիւնը հետզհետէ զարգանալով, ստացաւ աւելի որոշ ձևեր: Աստուածապաշտութեան ժողովների տեղերը, որոնք առաջ միմիայն հասարակ ժամադրութեան վայրերի նշանակութիւն ունէին, այժմ սկսեցին համարուել յատկապէս հասարակական եկեղեցական-աստուածապաշտական կեանքի համախմբումն, և հէնց այդպէս լինելուն համար, սկսեցին տարբերուել բոլոր միւս շինութիւններից:—Հետևապէս, շատ բնական է այդ պատճառով էլ, որ հէնց այդ ժամանակ յառաջ եկաւ սրբազան, յատկապէս եկեղեցական զգեստների գաղափարը, յառաջացաւ մի նոր սովորութիւն, աստուածապաշտութեան ժամանակ գործադրել զգեստների տարբեր սովորական առօրեայ կեանքից: Անկասկած այդ սովորութիւնը մի անգամից բարդ կերպարանք չստացաւ, այլ հետզհետէ, այդ պատճառով էլ ի հարկէ չէ կարելի ճիշտ որոշել նորա երևան գալու ժամանակը,—սակայն Գրգդարի կիսին նա շատ թէ քիչ տարածուած էր: Հէնց այդ ժամանակ էլ կազմուել է սկզբունքային տարբերութիւնը աստուածապաշտական զգեստների, իբրև սրբազան զգեստների և արտաքոյ աստուածապաշտականի կամ սովորականի մէջ: Այդ բանին ապացոյց ծառայում է Ստեփան պապի (257 թ.) որոշումն: Այսպէս, վերջինս, ի միջի այլոց կարգադրեց, որ քահանաներն ու սարկաւազները առօրեայ կեանքում սրբազան զգեստներ գործ չածեն, այլ բացառապէս եկեղեցում: Անկասկած աստուածապաշտութեան ժամանակ սովորական կեանքում գործածութիւնից տարբեր այլ զգեստների գործադրելու սովորութիւնը գոյութիւն ունէր նաև Ստեփան պապից առաջ, բայց այդ սովորութիւնը կարող էր խանգարուել, և ի հարկէ, առանձին քահանաների կողմից յաճախ խանգարուում էր, հետևապէս պարտաւորեցուցիչ ոյժ չունէր, մինչև որ պաշտօնապէս օրէնք դարձաւ: Այդպիսի ոյժ ստացաւ նա Ստեփան պապի ժամանակից սկսած, որն իւր կարգադրութեամբ նորան օրինական վաւերականութիւն է տալիս:—Գրգդարից ուշադրութիւն է դարձուում նաև

աստուածապաշտական զգեստների արտաքին վայելչութեան վերայ, հաւանականօրէն նորա համար որպէս զի գերակշէր հեթանոսական ծիսակատարութեանը, որը յաճախ հրապուրում էր հաւատքով թոյլ քրիստոնեաների: Յատկապէս այս ժամանակից սկսած, եկեղեցւոյ պաշտօնեաների համար դառնում է պարտաւորեցուցիչ աստուածապաշտութեան ժամանակ՝ համեմատած ժողովրդի գործածածին, աւելի շքեղ սպիտակ զգեստներ գործածուել: Հռովմին մօտիկ նաւամատոյցի Հիպպոլիտ եպիսկոպոսը (Գ-րդ դարի 2-րդ կիսում), իւր 37-րդ կանոնով որոշում է, որ «ամեն անգամ, երբ եպիսկոպոսը կը ցանկանայ խորհուրդ կատարել, նորա մօտ պէտք է հաւաքուեն քահանաներն ու սարկաւազները, սպիտակ զգեստներով, աւելի գեղեցիկ, քան ամբողջ ժողովրդինը, իսկ գլխաւորապէս մաքուր զգեստներով»: Ինչ որ Գ-րդ դարում կար, ի հարկէ աւելի հաստատուեց Գ-րդ և յաջորդ դարերում: Մի շարք գրաւոր վկայութիւններ իսկապէս հաստատում են, որ այժմ համարեա միշտ ընդունում էր տարբերութիւն աստուածապաշտական և ամենօրեայ զգեստների մէջ. այն է՝ առաջինները, որոնք միշտ սպիտակ գոյն*) ունէին, նկատուում էին որպէս սրբազան զգեստներ, որոնց աշխարհային տնտեսութեան մէջ չէին գործադրում: Մի կողմը թողնելով այս կէտին վերաբերեալ վկայութիւններից շատերը, մենք կը բաւականանանք մի քանիսով: Օրինակ, ս. Ոսկերբերանի կենսագրութիւնից յայտնի է, որ նա զգալով մահուան մօտենալը և կամենալով սուրբ պատարագ մատուցանել, խնդրեց իւր կոչ-

*) Ձգեստներն սև գոյնի մօտին առաջին անգամ յիշատակուում է Թէոդոր ընթերցողի տեղեկութեան մէջ, «որ Կ. Պօլսի Ռեակիոս արքեպիսկոպոսի մասին պատմում է, որ վերջինս (475 թ.) Վատիկանի կայսեր Քաղկեդոնի ժողովի մերժման առիթով շրջապատում է սև զգեստներով իրեն, իւր ամբիոնը և գահը»: Աստուածապաշտական զգեստների միւս գոյների երեւան գալը հաւանականօրէն պիտի վերաբերել ժ. կամ ժԱ. դարերին: Hefele. Cit. op. B. II.

մանը պատշաճ սպիտակ զգեստներ, և միայն իւր սովորական զգեստները մի կողմը դնելուց և կօշիկները փոխելուց յետք սկսեց քահանայադործել: Հերոնիմոսը եղեկիէլ մարգարէի գրքի բացատրութեան 44 գլխի մէջ ասում է ի միջի այլոց. «Աստուածային կրօնի մէջ պաշտօն կատարելու ժամանակ այլ զգեստներ են գործ ածում և այլ սովորական կեանքում. — «religio divina alterum habitum habet in ministerio, alterum in usu vitaeque communi».

Թէև Հերոնիմոսը այդ նկատողութիւնն անում է հին կրտակարանի զգեստաւորութեան վերաբերութեամբ, որը այդտեղ նա նկարագրում է, այնուամենայնիւ անկասկած է, ինչպէս որ habet բայի ներկայ ձևն էլ ցոյց է տալիս, որ իւր կարգադրութիւնները նա համաձայնեցնում է և քրիստոնէական պաշտամունքի, և հետևապէս, նորա խօսքերը նշանակութիւն ունին որքան հին կրտակարանի, նոյնքան էլ նոր կրտակարանի աստուածապաշտութեան վերաբերմամբ: Մինչև իսկ բացատրում է Հերոնիմոսը, թէ ի՞նչ էր առօրեայ և քրիստոնէական եկեղեցւոյ աստուածապաշտութեան զգեստաւորութեան մէջ եղած տարբերութիւնը: Օրինակ, խօսելով այն մասին, որ հին կրտակարանի քահանաներին պատուիրուած էր գաւիթ դուրս գալու ժամանակ, հանել այն զգեստները, որ նորա պաշտօնի ժամանակ գործ էին ածում և հագնել ուրիշը, նրկատում է. «սորանից մենք սովորում ենք, որ ոչ թէ առօրեայ եւ սովորական կեանքի մէջ գործածութեամբ պղծուած զգեստներով պէտք է մենք սրբութիւն սրբոց մտնենք, այլ մաքուր զգեստներով պէտք է մօտենանք Տիրոջ խորհուրդներին»: Պէլագիանների դէմ գրած ջադագովութեան մէջ (apologia), հերքելով այն որոշումն, «որ շքեղ զգեստներն ու զարդարանքները հակառակ են Աստծուն», նա ասում է. «ասա, մի՞թէ հակառակութիւն կը լինի Աստծուն, եթէ ես ունենամ շատ մաքուր պատմուճան (tunica), եթէ եպիսկոպոսը, քահանան, սարկաւազը և եկեղեցական մնացած հոգևորականութիւնը աստուածապաշտութեան ժամանակ դուրս դան սպիտակ զգեստով»:

(cadida veste): Այսպիսով, Հերոնիմոսի այդ բոլոր ասածների համեմատութիւնից երևում է, որ նորա ժամանակ պատարագի զգեստները լինելով սպիտակ, մաքուր և շատ թէ քիչ շքեղ, տարբերուում էին առօրեաներից իւրեանց նշանակութեամբ, այսինքն, կարող էին բացառապէս միայն աստուած պաշտութեան ժամանակ գործադրուել, բայց ոչ աշխարհիկ կեանքի մէջ: Հարկաւորութիւն չկայ ցոյց տալու, որ նմանօրինակ սկզբունքային տարբերութիւն աստուածապաշտական և առօրեայ զգեստների, պահպանուեց նաև յաջորդ դարերում*):

Այսպէս ուրեմն, եկեղեցական զգեստները աստուածապաշտական մտքով վերացրած, որ և է նկատմամբ սկզբունքով տարբեր սովորական, առօրեայ զգեստներից, աւելի հաւանական է, ծագել են Գ. դարում: Յատկապէս պատարագի զգեստները, իրենց արտաքին ձևով նման լինելով առօրեայ, սովորականներին, սկսեցին սկզբունքով տարբերուել վերջինից, իրենց նշանակութեամբ, որպէս սրբազան զգեստներ, իսկ արտաքին ձևի տարբերութիւնը կատարուել է համեմատաբար աւելի ուշ ժամանակներում, այսինքն 2-րդ դարից սկսուելով (հաւանականօրէն սորա վերջին), պաշտօնապէս ջոկնուելով աշխարհական հասարակական զգեստներից, եկեղեցական զգեստը սկսեց տարբերուել և իւր ձեւով էլ նաև եկեղեցւոյ պաշտօնեաների առօրեայ սովորական զգեստներից համեմատաբար արդէն աւելի ուշ ժամանակներում:

Թարգմ. ռուս.

Արսակ վարդապետ

Христіанское чтеніе.

1898 m. cccv.



*) Սորան վերաբերող Կարթագէնի Գ. և Հարբոնի ժողովների կանոնները, այլ և Լեոն Գ-ի, Բիւուլֆի և Թատերիսյի—արդէն վերևը յիշել ենք: